ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԽԱՐԲԵՐԴԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ
ՄԱՆԿԱՏՈՒՆ»
ՊՈԱԿ

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF LABOUR AND
SOCIAL ISSUES
"SPECIALIZED
CHILDREN'S
HOME OF KHARBERD"
SNCO

«20»հունվարի 2015թ. Մասիսի ԱՇԻԲ N Ե- 14
h/h 247290001004

*<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1>ծածկագրով շրջանակային*

*Համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի*

*Հնարավոր մասնակիցների ղեկավարներին*

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1>> ծածկագրով ընթացակարգի շրջանակներում <<Խարբերդի մասնագիտացված մանկատուն>> ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերել <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանք( ներ) /վառելիք/:

Սույն հրավերի( ծանուցման) ծածկագիր է հանդիսանում <<ԽՄՄ-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1>>:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել Արարատի մարզ, գ. Նոր-Խարբերդ, Բաղրամյան 58 հասցեով, մինչև 2015թ. Փետրվարի 2-ը, ժամը 11-ը: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Շ. Անտոնյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում է ըստ ստացման հերթականության ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն <<Խարբերդի մասնագիտացված մանկատուն>> ՊՈԱԿ-ի շենքում, Արարատի մարզ, գ. Նոր-Խարբերդ, Բաղրամյան 58 հասցեով, Տնտեսագետի սենյակում, 2015թ-ի փետրվարի 2-ի ժամը 11-ին:

Գնման առարկա է հանդիսանում <<Խարբերդի մասնագիտացված մանկատուն>> ՊՈԱԿ-ի կարիքների համար վառելիքի ձեռքբերումը:

<<Խարբերդի մասնագիտացված մանկատուն>> ՊՈԱԿ-ի կարիքների համար վառելիքի մատակարարման (որոնք կազմված են 1-2 չափաբաժիններից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի ( ծանուցման ) N 1 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված`

ա. Գնման ընթացակարգին մասնակցելու դիմում ( Հավելված N 5), ընդ որում պարտադիր է նշել մասնակցի էլեկտրոնային հասցեն,

բ. Գնային առաջարկ ( Հավելված N 5.1): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԽՄՄ-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/1 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքնելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

<<Խարբերդի մասնագիտացված մանկատուն>> ՊՈԱԿ-ի էլեկտրոնային հասցեն է` hbalasanian@yahoo.com:

Եթե Հրավերով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ ( լրացուցիչ) թաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը` մինչև կարգի 110-րդ 7-րդ մասով սահմանված կարգով պայամանագրի կնքում: Ընդ որում`

- Նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրերով հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,
- Նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)` հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան ( կոնկրետ ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթեր և/կամ տվյալներ:
-

Առդի --------- էջ:

*Հարգանքով* *Հ. Բալասանյան*

Կատարող` Շուշանիկ Անտոնյան /091 37 77 85/

Արարատի մարզ, գ. Նոր Խարբերդ
0236 6 00 25 (Մասիս) (Նոր Խարբերդ)
091 42 79 60

Ararat Marz, Nor Kharberd
0236 6 00 25 (Masis) (Nor Kharberd)
091 42 79 60